

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ**

Գ Լ ՈՒ Խ I . ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի կազմակերպման և գործունեության իրավական հիմքերը, դրանց նրաշխիքները, պետական մարմինների, գիտական, գիտատեխնիկական և ինովացիոն գործունեության սուբեկտների և մասնակիցների հետ նրա փոխհարաբերության հիմնական սկզբունքները և ուղղված է Հայաստանի Հանրապետության գիտական ներուժի պահպանմանը, հիմնարար ու կիրառական գիտության զարգացմանը՝ որպես գիտատեխնիկական առաջնագի, հանրապետության տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման հիմքի:

Հոդված 2. ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի կարգավիճակը

1. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան Հայաստանի Հանրապետության հիմնադրած՝ հատուկ կարգավիճակ ունեցող, ինքնակառավարվող բարձրագույն գիտական կազմակերպություն է, որը կազմակերպում, իրականացնում և համակարգում է գիտնիքի վրա հիմնված՝ տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման համար անհրաժեշտ հիմնարար և կիրառական հետազոտությունները:

2. ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան իրավաբանական անձ հանդիսացող ոչ առևտրային կազմակերպություն է, որի կազմակերպական իրավական ձևի և կարգավիճակի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով:

3. ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան գործում է սույն օրենքի, ՀՀ այլ օրենքների և իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից, ինչպես նաև իր կանոնադրության հիման վրա:

4. ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի լրիվ անվանումն է “Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիա ոչ առևտրային կազմակերպություն” (այսուհետև՝ ՀՀ ԳԱԱ):

5. ՀՀ ԳԱԱ-ն իրեն վերապահված խնդիրների լուծման համար կատարում է պետական կառավարման մարմնի առանձին գործառնություններ սույն օրենքով, այլ իրավական ակտերով և ԳԱԱ-ի կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում:

6. ՀՀ ԳԱԱ-ն իր առջև դրված խնդիրների լուծման նպատակով լիազորված է իրականացնել իր համակարգի գիտական կազմակերպությունների, իրավաբանական անձանց և հիմնարկների ընդհանուր ղեկավարումը, ապահովելով նրանց բնականոն և պատշաճ գործունեությունը: ՀՀ ԳԱԱ-ի ընդհանուր ղեկավարման լիազորությունները սահմանվում են սույն օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով և ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրությամբ:

7. ՀՀ ԳԱԱ-ն որպես սեփականություն ունի ամրացված գույք և իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

8. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ձևավորման ժամանակ ՀՀ ԳԱԱ-ի և իր համակարգի բյուջետային ֆինանսավորման չափը, կառավարման մարմնի կողմից ֆինանսների նախարարություն ներկայացվող ֆինանսական փաստաթղթերում նշվում է առանձին տողով:

9. Պետական բյուջեից ՀՀ ԳԱԱ-ի ֆինանսավորումը՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, պայմանագրային (թեմատիկ), նպատակային-ծրագրային ձևերով իրականացվում է ընդհանուր հիմունքներով, համաձայն գործող կարգի:

10. ՀՀ ԳԱԱ-ն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

11. ՀՀ ԳԱԱ-ն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

12. ՀՀ ԳԱԱ հաստիքացուցակը հաստատում է ՀՀ ԳԱԱ նախագահությունը:

Հոդված 3. ՀՀ ԳԱԱ-ի կարգավիճակի առանձնահատկությունները

ՀՀ ԳԱԱ-ի հատուկ կարգավիճակի առանձնահատկություններն են՝

- 1) ՀՀ ԳԱԱ-ն անմիջականորեն ենթարկվում է կառավարությանը.
- 2) ՀՀ ԳԱԱ-ի նախագահը մասնակցում է կառավարության նիստերին.
- 3) ՀՀ ԳԱԱ-ն գիտական գործունեության գծով կառավարության պաշտոնական գիտական խորհրդատուն է, որի առաջարկները պարտադիր կարգով քննարկում են կառավարությունը և պետական կառավարման համապատասխան մարմինները:
- 4) Գիտությանը առնչվող նորմատիվ ակտերը պարտադիր քննարկվում են ՀՀ ԳԱԱ-ի հետ:

Նոդված 4. ՀՀ ԳԱԱ-ի և հիմնադրի պատասխանատվությունը

1. ՀՀ ԳԱԱ-ն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով:
2. ՀՀ ԳԱԱ-ն պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:

Նոդված 5. ՀՀ ԳԱԱ-ի ստեղծումը և պետական գրանցումը

1. ՀՀ ԳԱԱ-ի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս կառավարության:
2. Հիմնադրի որոշմամբ սահմանվում են ՀՀ ԳԱԱ-ի անվանումը, նրա գործունեության առարկան և նպատակները, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները, նրան սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող գույքի կազմն ու արժեքը, ինչպես նաև օրենքին չհակասող այլ դրույթներ:
3. ՀՀ ԳԱԱ-ն ենթակա է պետական գրանցման՝ օրենքով սահմանված կարգով:

Նոդված 6. ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրությունը

1. ՀՀ ԳԱԱ-ի հիմնադիր փաստաթուղթը կանոնադրությունն է, որը ընդունում է ՀՀ ԳԱԱ-ի ընդհանուր ժողովը և հաստատում է կառավարությունը: ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրության մեջ փոփոխությունները և լրացումները կատարվում են նույն կարգով:
2. ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրությունը պետք է ներառի՝
 - 1) ՀՀ ԳԱԱ-ի անվանումը.
 - 2) ՀՀ ԳԱԱ նախագահության գտնվելու վայրը.
 - 3) ՀՀ ԳԱԱ-ի գործունեության առարկան և նպատակները, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները.

- 4) ՀՀ ԳԱԱ-ի կառավարման մարմինները, դրանց կազմը և լիազորությունները.
- 5) ՀՀ ԳԱԱ-ի սեփականության ձեռավորման, տիրապետման, օգտագործման և տնօրինման կարգը.
- 6) ՀՀ ԳԱԱ-ի շահույթի օգտագործման կարգը.
- 7) օրենքով կամ հիմնադրի կողմից նախատեսված և օրենքին չհակասող այլ դրույթներ:

Հոդված 7. ՀՀ ԳԱԱ խնդիրները և գործունեության հիմնական ուղղությունները

ՀՀ ԳԱԱ խնդիրներն են՝

1. իր համակարգում հիմնարար և կիրառական նշանակության հետազոտությունների կազմակերպումը, իրականացումը և համակարգումը.
2. Հայաստանի տնտեսական, սոցիալական և պետաիրավական զարգացման, մշակույթի, բնության ռացիոնալ (բանական) օգտագործման և պահպանության գիտական ապահովումը.
3. բնական, տեխնիկական, հումանիտար, սոցիալական գիտությունների և արվեստների կարևորագույն ուղղություններով հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների և մշակումների կազմակերպումը և համակարգումը.
4. լիազորված պետական մարմինների հետ Հանրապետության հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների գերակա ուղղությունների ցանկերի որոշումը և օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատման համար ներկայացումը.
5. գիտատեխնիկական առաջընթացի սկզբունքորեն նոր ուղիների բացահայտումը, մասնակցությունը հայրենական և համաշխարհային գիտության նվաճումների գործնական կիրառման առաջարկությունների մշակմանը.
6. հանրապետության գիտական կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում կատարվող հիմնարար հետազոտությունների համակարգումը.
7. գիտական դպրոցների զարգացման, բարձր որակավորման գիտական աշխատողների պատրաստման, գիտնականների և մասնագետների որակավորման բարձրագույն համար, այդ թվում արտասահմանյան գիտական կենտրոններում, պայմանների ստեղծումը,
8. գիտատեխնիկական տեղեկատվական համակարգի զարգացման ապահովումը.
9. Միջազգային գիտական համագործակցության զարգացման համար պայմանների ստեղծում:

ՀՀ ԳԱԱ գործունեության հիմնական ուղղություններն են՝

1. գիտատեխնիկական ոլորտում առկա վիճակի վերլուծության անցկացումը և հետագա զարգացման միտումների վերաբերյալ կանխատեսումների մշակումը.

2. բնական, տեխնիկական, հումանիտար և սոցիալական գիտությունների հիմնախնդիրների գծով գիտական և գիտատեխնիկական խորհուրդների, հանձնաժողովների ստեղծումը.

3. օրենսդրության կատարելագործման վերաբերյալ սահմանված կարգով սեփական առաջարկությունների ներկայացում.

4. ՀՀ ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունների և այլ կառուցվածքային օղակների գործունեության հիմնական ուղղությունների սահմանումը.

5. բարձր որակավորման գիտական և գիտամանկավարժական (այդ թվում մագիստրական) կադրերի պատրաստումը պետական լիցենզիայի առկայության պայմաններում.

6. պետական լիազորված մարմնի կողմից սահմանված կարգով կառավարություն ներկայացվող գիտության հետ առնչվեղ փաստաթղթերի նախագծերի, գիտական, գիտատեխնիկական և տնտեսական ծրագրերի, ինովացիոն նախագծերի գիտական փորձաքննության անցկացումը.

7. ՀՀ ԳԱԱ-ի գիտատեխնիկական ներուժի զարգացման, նյութատեխնիկական բազայի ամրապնդման, գիտատար և բարձր տեխնոլոգիական գիտատեխնիկական արտադրանքի փորձնական արտադրության կազմակերպման ապահովումը, ինչպես նաև հետազոտման նոր միջոցների և մեթոդների ստեղծումը և տարածումը.

8. ՀՀ ԳԱԱ-ի համակարգի գիտական կազմակերպությունների և այլ կառուցվածքային օղակների զարգացմանն ուղղված կապիտալ ներդրումային ծրագրերի նախագծերի մշակումը և սահմանված կարգով ներկայացումը.

9. միջազգային գիտական և գիտատեխնիկական համագործակցության իրականացումը, արտասահմանյան երկրների գիտությունների ակադեմիաների և գիտական այլ կազմակերպությունների հետ փոխշահավետ կապերի զարգացումը, միջպետական գիտական և գիտատեխնիկական ծրագրերի և նախագծերի կատարումը, մասնակցությունը միջազգային գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների և ասոցիացիաների գործունեությանը.

10. ՀՀ ԳԱԱ-ի համակարգի գիտական կազմակերպություններում իրականացվող հիմնարար և կիրառական հետազոտություններում արտասահմանյան, այդ թվում սփյուռքահայ, գիտական ներուժի մասնակցության ապահովումը.

11.կրթական համակարգի գիտական մակարդակի բարձրացմանը, բարձրագույն կրթության ստացումն ապահովող հաստատությունների պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացմանը, կրթական ծրագրերի և ձեռնարկների ստեղծմանը աջակցելը.

12.գիտելիքների քարոզչությունը և տարածումը, հրատարակչական գործունեությունը և տպագրական հրատարակչությունը. .

13.ՀՀ ԳԱԱ-ի համակարգում, ինչպես նաև օրենքով թույլատրվող սահմաններում համատեղ ենթակայության գիտական, գիտակրթական և գիտաարտադրական կենտրոնների ստեղծումը.

14.գիտատեխնիկական տեղեկատվության սեփական ռեսուրսների ստեղծումն ու զարգացումը, այդ թվում տարածումը հայրենական և միջազգային տեղեկատվական համակարգչային ցանցերում.

15.գիտական նստաշրջանների, գիտաժողովների, դպրոցների, սեմինարների և խորհրդակցությունների անցկացումը, ինչպես նաև մասնակցությունը այդպիսի միջոցառումներին:

Հոդված 8. ՀՀ ԳԱԱ-ի ձեռնարկատիրական գործունեությունը և հարկային պարտավորությունները

1.ՀՀ ԳԱԱ-ն կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ՝ օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում եւ գործունեության տեսակներով:

2.ՀՀ ԳԱԱ-ի գործունեության ընթացքում առաջացած շահույթը օրենսդրությամբ սահմանված կարգով օգտագործվում է նրա կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

3.ՀՀ ԳԱԱ-ի կողմից իր կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 9. ՀՀ ԳԱԱ-ի իրավունքները և պարտականությունները իր համակարգի կազմակերպությունների նկատմամբ

1. ՀՀ ԳԱԱ-ն իրականացնում է իր համակարգի կազմակերպությունների ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը եւ պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ անպատշաճ իրականացման համար:

2. ՀՀ ԳԱԱ-ն՝

ա) կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը եւ նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ) իրականացնում է կազմակերպության գործունեության վերահսկողությունը.

դ) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները.

ե) վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման եւ պահպանության նկատմամբ.

զ) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները եւ տարեկան հաշվեկշիռը, եթե կազմակերպությունը չունի կոլեգիալ կառավարման մարմին.

ը) իրականացնում է սույն օրենքով, հիմնադրի որոշումներով եւ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառնություններ:

ԳԼՈՒԽ II. ՀՀ ԳԱԱ-Ի ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԿԱԶՄԸ

Հոդված 10. ՀՀ ԳԱԱ-ի համակարգը

1. ՀՀ ԳԱԱ-ն գիտական համակարգ է, որն իր կազմում միավորում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներին (իսկական անդամներին), թղթակից անդամներին, ՀՀ ԳԱԱ պատվավոր և արտասահմանյան անդամներին, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ-ի բաժանմունքները, ՀՀ ԳԱԱ աշխատակազմը, պետական ոչ առևտրային կազմակերպություն հանդիսացող գիտական կազմակերպությունները և իր ենթակայության տակ գտնվող այլ իրավաբանական անձանց և հիմնարկներին:

2. ՀՀ ԳԱԱ-ի համակարգի մեջ մտնող գիտական կազմակերպությունների ցանկը հաստատում է ՀՀ կառավարությունը՝ ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրությանը կից հավելվածի տեսքով:

Հոդված 11. ՀՀ ԳԱԱ անդամները

1. ՀՀ ԳԱԱ-ն շնորհում է հետևյալ ակադեմիական գիտական տիտղոսները՝ ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոս (իսկական անդամ), ՀՀ ԳԱԱ-ի թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ-ի պատվավոր անդամ, ՀՀ ԳԱԱ-ի արտասահմանյան անդամ, ՀՀ ԳԱԱ-ի պատվավոր դոկտոր: ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիական գիտական տիտղոսները շնորհվում են ցմահ:

2. ՀՀ ԳԱԱ գիտական տիտղոսներն ամրագրվում են դիպլոմներով:

3. ՀՀ ԳԱԱ գիտական տիտղոսների շնորհումն իրականացվում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության համաձայն անցկացվող ընտրությունների արդյունքներով: ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներին և թղթակից անդամներին տրամադրվում է ցմահ պատվովճար, որի չափը սահմանում է ՀՀ կառավարությունը: Պատվովճարի նշանակաման կարգը սահմանվում է ԳԱԱ- կանոնադրությամբ:

4. ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոսների, թղթակից անդամների, պատվավոր, արտասահմանյան անդամների և պատվավոր դոկտորների ընտրությունների կարգը, նրանց իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրությամբ:

5. ՀՀ ԳԱԱ-ի իսկական և թղթակից անդամների առավելագույն թիվը և մասնագիտությունները սահմանում է ՀՀ կառավարությունը՝ ՀՀ ԳԱԱ-ի նախագահության առաջարկությամբ: ՀՀ ԳԱԱ-ի իսկական և թղթակից անդամների ընտրությունները անցկացվում են ոչ ուշ քան 3 տարին մեկ անգամ:

6. Ակադեմիկոսի և թղթակից անդամների գիտական տիտղոսներ շնորհում է միայն ՀՀ ԳԱԱ-ն:

Նոդված 12. ՀՀ ԳԱԱ-ի գիտական, գիտատեխնոլոգիական կազմակերպությունները

1. ՀՀ ԳԱԱ-ի համակարգիում գործում են օրենքով սահմանված կազմակերպարարական ձև ունեցող գիտական, գիտատեխնոլոգիական կազմակերպություններ:

2. ՀՀ ԳԱԱ-ի գիտական և գիտատեխնոլոգիական կազմակերպությունները պետության կողմից հիմնադրված պետական ոչ առևտրային կազմակերպություններ են, որոնց կառավարումը լիազորված է իրականացնել ՀՀ ԳԱԱ-ն:

3. ՀՀ ԳԱԱ-ն գիտական և գիտատեխնոլոգիական կազմակերպությունների ստեղծումն ու կառավարումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրությամբ, ինչպես նաև այդ կազմակերպությունների կանոնադրություններով սահմանված կարգով:

4. ՀՀ ԳԱԱ-ի համակարգի գիտական կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և սույն օրենքով սահմանված կարգով կարող են զբաղվել շահութաբեր գործունեությամբ՝ այդ նպատակների

համար օգտագործելով պետական առաջադրանքի կատարումից ազատ տարածքները, սարքավորումները եւ այլ գույք:

5. ՀՀ ԳԱԱ-ի կողմից օտարերկրյա պետություններում գիտական կազմակերպությունների ստեղծումն իրականացվում է հիմնադրի որոշմամբ՝ տվյալ երկրի օրենսդրությանը համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 13. ՀՀ ԳԱԱ-ի համակարգի այլ իրավաբանական անձիք և հիմնարկները

1. ՀՀ ԳԱԱ-ն կարող է ստեղծել տեխնոպարկեր և փորձնական գործարաններ, համատեղ ձեռնարկություններ և ընկերություններ՝ գիտական գործունեության կիրառական արդյունքների առևտրայնացման և ինովացիոն տեխնոլոգիաների ձևավորման համար:

2. ՀՀ ԳԱԱ-ի ենթակայության տակ գտնվող և գիտական կազմակերպություններ չհանդիսացող իրավաբանական անձանց և հիմնարկների, այլ ստորաբաժանումների գործունեությունն իրականացվում է ՀՀ օրենսդրության, ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրության, տվյալ իրավաբանական անձի կանոնադրության հիման վրա:

3. ՀՀ ԳԱԱ-ն կարող է ստեղծել հիմնարկի կարգավիճակ ունեցող գիտակրթական կենտրոններ՝ մագիստրոսական և հետբուհական կրթական ծրագրերով բարձր որակավորման մասնագետ կադրերի պատրաստման նպատակով:

4. ՀՀ ԳԱԱ-ն կարող է ունենալ գիտական գործունեությունը խթանող հիմնադրամներ:

5. ՀՀ ԳԱԱ-ն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

Հոդված 14. ՀՀ ԳԱԱ-ի բաժանմունքները

1. Գիտության միևնույն բնագավառում գործող ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոսները, թղթակից և արտասահմանյան անդամները, գիտաշխատողները և գիտական կազմակերպությունները միավորվում են ՀՀ ԳԱԱ-ի բաժանմունքներում:

2. ՀՀ ԳԱԱ-ի բաժանմունքը պատասխանատվություն է կրում տվյալ բնագավառում կատարվող աշխատանքների կազմակերպման, գիտական ծրագրերի պատրաստման և կատարված աշխատանքների որակի համար:

3. Յուրաքանչյուր բաժանմունք ՀՀ ԳԱԱ-ի ընդհանուր ժողովում մասնակցելու համար ներկայացնում է իր բնագավառի ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամներին, ինչպես նաև գիտական կազմակերպությունների կողմից, ըստ

կազմակերպություններին հատկացված մասնաբաժինների, ընտրված ներկայացուցիչներին:

4. ՀՀ ԳԱԱ-ի բաժանմունքը ղեկավարում է բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարը, որն ընտրվում է բաժանմունքի ընդհանուր ժողովում տվյալ բնագավառում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների թվից 5 տարի ժամկետով, փակ (զաղտնի) քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ և ներկայացվում է ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովի հաստատմանը: Ընտրությունը կատարվում է համաձայն ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից հաստատված կանոնակարգի:

Հոդված 15. ՀՀ ԳԱԱ-ի աշխատակազմը

1. ՀՀ ԳԱԱ-ի աշխատակազմը ստեղծվում է ՀՀ ԳԱԱ-ի կառավարման մարմիններին վերաբառված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման և ապահովման նպատակով:

2. ՀՀ ԳԱԱ աշխատակազմի կառուցվածքը և իրավասությունները որոշվում են ՀՀ ԳԱԱ-ի նախագահության հաստատած կանոնակարգով:

Գ Լ ՈՒ Ն Ի Ի Ի. ՀՀ ԳԱԱ-Ի Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Մ Ա Ն Մ Ա Ր Մ Ի Ն Ն Ե Ր Ը

Հոդված 16. ԳԱԱ կառավարման մարմինները

1. ՀՀ ԳԱԱ կառավարման մարմիններն են՝ ՀՀ ԳԱԱ-ի ընդհանուր ժողովը, ՀՀ ԳԱԱ-ի նախագահությունը եւ ՀՀ ԳԱԱ-ի նախագահը:

2. ՀՀ ԳԱԱ-ի կառավարման կարգը, սահմանվում է սույն օրենքով, ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրությամբ:

Հոդված 17. ՀՀ ԳԱԱ-ի ընդհանուր ժողովը

1. ՀՀ ԳԱԱ-ի ընդհանուր ժողովը ՀՀ ԳԱԱ-ի կողմից կառավարման բարձրագույն մարմինն է, որի լիազորությունները սահմանվում են ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրությամբ:

2. ՀՀ ԳԱԱ-ի ընդհանուր ժողովի կազմում ընդգրկվում են՝ ՀՀ ԳԱԱ-ի նախագահը, ՀՀ ԳԱԱ-ի նախագահության անդամները, ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոսները և թղթակից անդամները, ՀՀ ԳԱԱ-ի գիտական կազմակերպությունների ներկայացուցիչները:

3. ՀՀ ԳԱԱ-ի ընդհանուր ժողովում գիտական կազմակերպությունների ներկայացուցիչների թիվը, ընտրության կարգը և ընդհանուր ժողովին աշխատանքներին

նրանց մասնակցության առանձնահատկությունները սահմանվում են ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրությամբ:

4. ՀՀ ԳԱԱ պատվավոր և արտասահմանյան անդամները կարող են մասնակցել ընդհանուր ժողովի աշխատանքներին՝ առանց ընտրելու իրավունքի:

Հոդված 18. ՀՀ ԳԱԱ-ի նախագահը

1. ՀՀ ԳԱԱ-ի նախագահը ղեկավարում է ՀՀ ԳԱԱ գործունեությունը՝ իր իրավասության սահմաններում և ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրությանը համապատասխան: Նա պատասխանատու է ՀՀ ԳԱԱ-ի բնականոն գործունեության համար:

2. ՀՀ ԳԱԱ-ի նախագահի լիազորությունները որոշվում են ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրությամբ:

3. ՀՀ ԳԱԱ-ի նախագահը ընտրվում է ՀՀ ԳԱԱ-ի ընդհանուր ժողովի կողմից, ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոսների թվից փակ գաղտնի քվեարկությամբ 5 տարի ժամանակով, ոչ ավել քան երկու անընդմեջ ժամկետով:

Հոդված 19. ՀՀ ԳԱԱ-ի նախագահությունը

1. ՀՀ ԳԱԱ-ի նախագահությունը ՀՀ ԳԱԱ-ի կառավարման կոլեգիալ մարմինն է, որը իրականացնում է ՀՀ ԳԱԱ-ի ընթացիկ կառավարումը և հաշվետու է ՀՀ ԳԱԱ-ի ընդհանուր ժողովին: ՀՀ ԳԱԱ նախագահության լիազորությունները որոշվում են ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրությամբ:

2. ՀՀ ԳԱԱ-ի նախագահությունը գլխավորում է ՀՀ ԳԱԱ-ի նախագահը:

3. ՀՀ ԳԱԱ-ի փոխնախագահը և ակադեմիկոս քարտուղարը ընտրվում են ՀՀ ԳԱԱ-ի իսկական և թղթակից անդամների թվից ՀՀ ԳԱԱ-ի ընդհանուր ժողովի կողմից փակ գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով, ձայների պարզ մեծամասնությամբ:

4. ՀՀ ԳԱԱ-ի նախագահությունը կազմված է ի պաշտոնե և ընտրովի անդամներից: Ի պաշտոնե ՀՀ ԳԱԱ-ի նախագահության անդամ են ՀՀ ԳԱԱ-ի նախագահը, փոխնախագահը և ակադեմիկոս քարտուղարը և ՀՀ ԳԱԱ բաժանմունքների ակադեմիկոս քարտուղարները:

ՀՀ ԳԱԱ-ի նախագահության մնացած անդամները ՀՀ ԳԱԱ-ի նախագահության ներկայացմամբ ընտրվում են ՀՀ ԳԱԱ-ի ընդհանուր ժողովում՝ վերջինիս անդամ հանդիսացող ՀՀ ԳԱԱ-ի գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներից 5

տարի ժամկետով՝ փակ (գաղտնի) քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրությամբ սահմանված կարգով:

5. Բուհերի, տնտեսության ճյուղերի, ինչպես նաև պետական կառավարման մարմինների ներկայացուցիչները կարող են հրավիրվել մասնակցելու ՀՀ ԳԱԱ-ի նախագահության նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

Հոդված 20. ՀՀ ԳԱԱ-ի փոխհարաբերությունները պետական կառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ

1. ՀՀ ԳԱԱ-ի պետական կառավարման մարմինների հետ փոխհարաբերությունները իրականացվում են միացյալ գիտական քաղաքականության շրջանակներում և կարգավորվում են սույն օրենքով, “Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին” ՀՀ օրենքով, այլ օրենքներով և օրենսդրական ակտերով:

2. ՀՀ ԳԱԱ-ն պետական բյուջեից ֆինանսավորվում է առանձին տողով, համապատասխան պետական կառավարման մարմնի միջոցով և իր գործունեության մեջ հաշվետու է պետության առջև:

3. Գիտատեխնիկական ոլորտում ՀՀ ԳԱԱ-ն համագործակցում է պետական կառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ, այդ թվում նաև տարբեր հանձնաժողովների աշխատանքներում ՀՀ ԳԱԱ-ի ներկայացուցիչների մասնակցության ձևով:

Հոդված 21. Վերահսկողությունը ՀՀ ԳԱԱ-ի գործունեության նկատմամբ

1. ՀՀ ԳԱԱ-ի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է հիմնադիրը կամ հիմնադրի կողմից լիազորված մարմինը:

2. ՀՀ ԳԱԱ-ն հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

Գ Լ ՈՒ Խ I V. ՀՀ ԳԱԱ-Ի ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ

Հոդված 22. ՀՀ ԳԱԱ-ի գույքի կազմը

1. ՀՀ ԳԱԱ-ին պատկանող գույքը բաղկացած է նրա սեփականությունը հանդիսացող գույքից և գիտական գործունեությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նրան անժամկետ, անհատույց օգտագործման համար ամրացված գույքից:

2. ՀՀ ԳԱԱ-ին ամրագրված գույքի, այդ թվում և բյուջետային միջոցների, ինչպես նաև սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման կարգը որոշվում է ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրությամբ:

Հոդված 23. ՀՀ ԳԱԱ-ի սեփականությունը

1. ՀՀ ԳԱԱ-ի սեփականությունը ձևավորվում է նրա հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև գործունեության ընթացքում ստեղծված և ձեռք բերված գույքից (շինություններ, կառույցներ, հողամասեր և անշարժ գույքի այլ տեսակներ, ինչպես նաև սարքավորումներ ու սպառողական, սոցիալական և մշակութային նշանակության շարժական և անշարժ այլ միջոցներ):

2. Հիմնադրման պահին ՀՀ ԳԱԱ-ին հիմնադրի կողմից որպես սեփականություն հանձնվող գույքի չափը և շրջանակները սահմանվում են հիմնադրման մասին որոշմամբ:

3. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

4. ՀՀ ԳԱԱ-ին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ լուծարումից հետո մնացած գույքի:

5. ՀՀ ԳԱԱ-ն օրենսդրությանը համապատասխան, կարող է օգտվել մտավոր սեփականության իրավունքներից, գիտատեխնիկական գործունեության այլ արդյունքներից, որոնք ստացվել են պետական բյուջեի և (կամ) ՀՀ ԳԱԱ-ի ենթակայության կազմակերպությունների միջոցների հաշվին:

6. ՀՀ ԳԱԱ-ի սեփականության պահպանման պատասխանատվությունը կրում է ՀՀ ԳԱԱ-ն:

7. ՀՀ ԳԱԱ-ի սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

Հոդված 24. ՀՀ ԳԱԱ-ին ամրագրված գույքը

1. Հիմնադիրը կարող է ՀՀ ԳԱԱ-ին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

2. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից ՀՀ ԳԱԱ-ին ամրագրված գույքը:

3. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հանձնել վարձակալության: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը 5 տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում ՀՀ ԳԱԱ-ի ստացած եկամուտներն ուղղվում են նրա կանոնադրական խնդիրների իրականացմանը:

ՀՀ ԳԱԱ-ին ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

4. Հիմնադրի կողմից գույքը ՀՀ ԳԱԱ-ին ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

5. Հիմնադրի կողմից ՀՀ ԳԱԱ-ին ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ ՀՀ ԳԱԱ-ի օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

Հոդված 25. ՀՀ ԳԱԱ-ի ֆինանսական միջոցները

1. ՀՀ ԳԱԱ-ի ֆինանսական միջոցները ձևավորվում են՝

1) ՀՀ ԳԱԱ-ի և համակարգի կազմակերպությունների գիտական և տնտեսական գործունեությունից, այդ թվում՝ հանրապետության և արտերկրի իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ պայմանագրային աշխատանքներից, սեփական մշակումների իրացման հետ կապված գիտաարտադրական գործունեությունից ստացված եկամուտներից.

2) իրավաբանական և ֆիզիկական անձանց, այդ թվում արտասահմանյան, նվիրատվություններից, ինչպես նաև կտակներից.

3) ՀՀ ԳԱԱ-ի գույքի և գույքային իրավունքի օգտագործումից ստացած եկամուտներից.

4) օրենքով չարգելված և ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրությամբ ամրագրված այլ աղբյուրներից:

2. Ֆինանսավարման լրացուցիչ աղբյուրների ներգրավումը չի կարող հանգեցնել պետական բյուջեից ՀՀ ԳԱԱ-ի ֆինանսավորման չափերի նվազեցմանը:

3. Իր ֆինանսավորման սահմաններում ՀՀ ԳԱԱ-ն և իր համակարգի կազմակերպությունները ինքնուրույնաբար են որոշում իրենց աշխատողների թիվը, նրանց վարձատրության կարգը, ինչպես նաև հատկացվող գումարների ծախսման

հիմնական ուղղությունները, համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրության պահանջների:

4. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի շահութաբեր գործունեության արդյունքում ստացած միջոցների հաշվին, հաստատված կարգի համաձայն, լուծել նաև սոցիալական, այդ թվում կենսաթոշակային խնդիրներ:

5. ՀՀ ԳԱԱ-ի համակարգի կազմակերպություններին պետական բյուջեով տրամադրված ֆինանսական միջոցների տեղաբաշխումը կատարում է ՀՀ ԳԱԱ-ն:

Հոդված 26. Խոշոր գործարքները

1. Խոշոր են այն գործարքը կամ մի քանի փոխկապակցված գործարքները, որոնք կապված են ՀՀ ԳԱԱ-ի կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ, որի արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու մասին որոշման ընդունման օրվանը նախորդող եռամսյակում տրված հաշվապահական հաշվետվությամբ ՀՀ ԳԱԱ-ին սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի 50 տոկոսից ավելին: Խոշոր չեն այն գործարքները, որոնք կատարվում են ՀՀ ԳԱԱ-ի առօրյա գործունեության ընթացքում և համարվում են նրա կանոնադրական խնդիրներից ուղղակիորեն բխող գործառույթ:

2. Խոշոր գործարքը կատարվում է հիմնադիրի համաձայնությամբ:

3. ՀՀ ԳԱԱ-ի կողմից սեփականության իրավունքով նրան պատկանող գույքի արժեքի 20-50 տոկոսը կազմող արժեքով ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ կապված խոշոր գործարքներ կատարելու մասին որոշման ընդունումը ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրությամբ սահմանված կարգով վերապահվում է նրա կոլեգիալ կառավարման մարմնին:

4. Սույն հոդվածի պահանջների խախտմամբ կատարված խոշոր գործարքը կարող է դատական կարգով ճանաչվել անվավեր՝ ՀՀ ԳԱԱ-ի հիմնադրի կամ նրա լիազորած պետական մարմնի հայցի հիման վրա:

ԳԼՈՒԽ V

ՀՀ ԳԱԱ-Ի ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

Հոդված 27. ՀՀ ԳԱԱ-ի վերակազմակերպումը

1. ՀՀ ԳԱԱ-ն կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

2. ՀՀ ԳԱԱ-ն դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Նոդված 28. ՀՀ ԳԱԱ-ի լուծարումը

1. ՀՀ ԳԱԱ-ի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

2. ՀՀ ԳԱԱ-ն կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

ՀՀ ԳԱԱ-ն կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

3. ՀՀ ԳԱԱ-ն դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

4. ՀՀ ԳԱԱ-ի լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է պետական բյուջե:

ԳԼՈՒԽ VI

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹ

Նոդված 29. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ՀՀ կառավարությունը և համապատասխան մարմինները պարտավոր են ՀՀ ԳԱԱ-ի կազմակերպման և գործունեության կարգը համապատասխանեցնել սույն օրենքին:

3. ՀՀ ԳԱԱ-ին վերաբերող բոլոր իրավական ակտերը համաձայնեցվում են սույն օրենքի հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին»
Հայաստանի Հանրապետության 2000 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-119 օրենքի
(այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան ոչ առևտրային իրավաբանական
անձ է, որի կազմակերպական իրավական ձևի, կարգավիճակի և գործունեության
առանձնահատկությունները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության
Գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով »:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան
հաջորդող տասներորդ օրը: